

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐ
ՔԱՂԱՔԱՅԻ ՎԵՐԱՄՈՒ

ԳՐԱԿԱՆ ՊՐՈՊՐԵԴԱՏԱԲԻ
ԽՈՇՀՈՇԵՐ


Գրության
տաշվան կամացը.
այս գրության
դիմութափառ
ուղարկութիւն
(իւլիոսի)

ԳՈՒՐԳԵՆ ՄԵՎԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՓՈԽԸ

ՀԱՅՈՑ ԳԻՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1946



491.99-53
4-41

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԽՈՐՉՈՒՐԴ

ԳՈՒՐԳԵՆ ՄԵՎԱԿ

ՀԱՅԱԳԻՐ Է 1961 թ.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԸ

ՀԱՅԱԳԻՐ



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎԱՆ

1946

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կարգագրությամբ

Պատասխանառ Խմբագիր՝
Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի խոկական անդամ,
Գիտական պրոպագանդայի խորհրդի նախագահ՝
Ս. Կ. ԿՈՐԱԳԵՏՅԱՆ

A 13524

Իր կազմավորման օրից մինչև Հայաստանում սովետական կարգեր հաստատվելը հայոց լեզուն ունեցել և կատարել է իր հասարակական որոշ դերը այնքան, որքան այդ հնարավոր էր ցարական հասարակարգում, կապիտալիզմի պայմաններում, ճընշանած ժողովրդի գրական լեզվի համար։ Առաջն ֆունկցիաները, որ կատարում էր հայոց լեզուն այդ շրջանում և այդ պայմաններում։

Մայրենի լեզվով գործող տարրական (ծխական) և միջնակարգ դպրոցներում հայ լեզուն դպրոցական լեզու էր։ Բոլոր գիտությունների դասագրքերը մայրենի լեզվով էին, և մեր լեզուն պատվով էր կատարում իր այդ դերը։ Բայց միջնակարգից բարձր կրթության և ոչ մի դասագիրք, մանավանդ ստույգ գիտությունների գծով, գոյություն չուներ, և մեր լեզուն այդ պատիճումի մշակված չէր։ Հայ լեզուն չուներ մշակված գիտական տերմինաբանություն և համապատասխան դարձվածքներ ու արտահայտություններ։

Գրական-ժողովրդական՝ հանրամատչելի բավական հարուստ գրականության պահանջները նույնպես բավարարվում էին այդ լեզվով, քանի որ դրա համար ստույգ տերմինաբանություն և գիտական լեզու հարկավոր չէր։ Մեր լեզուն լիովին ապահովում էր նաև մամուլի, լրագրության պահանջները և բոլորովին վատ չէր մշակված իրեն հրապարակախոսության լեզու։

Գեղարվեստական գրականությանը ծառայելը պետք է համարել մեր գրական լեզվի ամենահիմնական դերը դպրոցական-կըրթական ասպարեզում ունեցած նրա դերի հետ մեկտեղ մինչև սովետական կարգերի հաստատումը մեր երկրում։ Մեր բավական

1) Կարդացված է Հայկ. ՍՍՌ Գիտ. Ակ. Լեկտորիումի գծով, 1945 թվի դեկտ. 11-ին։

Հարուստ նախասովետական գրականությունը (ինքնուրույն ու թարգմանական) աներեակայելի էր առանց այդ լեզվի:

Դպրոց, մամուլ, թատրոն և գրականություն, ահա այն հիմնական բնագավառները, որտեղ գործածվում և մշակվում էր մեր գրական լեզուն: Իբրև կանոն, նա հայ ընտանիքների մայրենի լեզուն չէր, հայ մանուկներն իրենց ծնողների հետ գրական լեզվով թիւ էին խոսում նույնիսկ ինտելիգենցիայի շրջաններում, էլ շենք խոսում բուն ժողովրդի մասին, որը իր հիմնական մասով անգրագետ էր, դպրոցի երես չէր տեսել և դրա հետևանքով էլ ո՛չ օգտըզում էր գրական լեզվից, ո՛չ էլ, մանավանդ, մասնակցում նրա մշակմանը, որպիսին հաճախ ուղղակի կոչում էր «գրաբար»:

Ահա, թե ինչ էր գրում այդ մասին հրապարակախոս Ա. Արասիսանյանը իր «Մուլրճի» մեջ 1898 թվին. «[ինելով մեծ մասամբ զբարերից և կամ պարոցում յուրացրած, մեր գրական լեզուն մշակվել է միմիայն այնպիսի մարդկանց ձեռքով, որոնց համար այդ լեզուն երբեք չի եղել մայրենի]: Այդ մշակության մեջ մասնակից չի եղել՝ շենք ասում ժողովուրդը, բայց գոնե մի լայնածավալ հասարակություն՝ բազկացած թեկուզ գրական լեզվին ընտելացած ընտանիքներից, որովհետև ոչ մի խավի համար նա չի եղել մայրենի լեզու...»:

Սակայն Արասիսանյանով չի սկսվում և նրանով էլ չի վերջանում մեր լեզվի մոտավոր անցյալի վիճակից տրտնջացողների և նրան զարգացման ուղի նշողների շարքը: Այսպիս, Վահան Տերյանը 1914 թ. Թրիլիսիում կարդացած իր «Հայ գրականության գալիք օրը» ոեֆերատով հայտարարում էր, որ կապիտալի արշավը երկու հետևանք կարող է ունենալ մեզ համար.

«Մենք կծովվենք, այսինքն՝ կկորցնենք մեր կուլտուրական առաջնության գործոնները, կկորցնենք մեր լեզուն և կդառնանք մի ապազգային մասսա, կամ թե չէ կզարդացնենք ամենից առաջ մեր լեզուն, հետո մյուս ազգային-կուլտուրական գործոնները և ընդունելով եվրոպական կուլտուրան՝ կմտնենք եվրոպական ազգերի շարքը իբրև կուլտուրական մի ազգ»:

Սակայն ամենից ավելի ցնցող տպավորություն է թողնում նույնիսկ այսօր, երբ հայ ժողովրդի, նրա կուլտուրայի ու լեզվի առողջ ներկան և առավել փայլուն ապագան ոչ մի կասկած չեն

առաջացնում փոքր ի շատե բանական մարդկանց մեջ, այս՝ նույնիսկ այսօր ցնցող տպավորություն է թողնում անվանի հայագետ Ստ. Մալխասյանի մասմբ խումապային, բայց զգալի շափով ճշմարիտ այն հոդվածը, որ գրել և հրապարակել էր նա 1917 թվին ոՄեծ կտանգի հանդեպ խորագրով: Այնտեղ ընկ-Մալխասյանը գրել է:

«Ներկայումս ոռուսահայության առաջ դրված է հայերենի լինել թե լինելու հարցը իր բոլոր սպառնալի հետևանքներով... որքան էլ մենք կամենանք հուսադրել մեզ, որքան էլ ստիպենք մեզ լավատես լինել, այնուամենայնիվ պետք է խոստովանենք, որ հայերեն լեզուն յուր գոյության ճնշաժամի մեջ է, և եթե արտաքր կարգի պայմաններ առաջ չգան, նա կկորչի բոլորովին հեռու կամ մոտիկ ապագայում»:

Հայ ժողովրդի ազգային-գրական լեզվի մոտավոր անցյալի վիճակի այս դառնացած արձանագրումը մեզ ավելորդ անգամ հիշեցնում է, թե ինչպիսի աղետալի վիճակի մեջ և ինչպիսի խորիորատի եղրին էին կանգնած մեր լեզուն և կուտուրան ուռուցիայի նախօրյակին: Այդ արձանագրումը միաժամանակ մեզ հնարավորություն է տալիս ավելի պարզ կերպով տեսնելու այն փըրկարար զորությունը, որ ոմեցավ հայ ժողովրդի, նրա կուտուրայի ու լեզվի բարգավաճման գործում Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ունուցիան, կրկին անդամ արձանագրելու այն անմոռանալի եղբայրական օգնությունը, որ մեզ հասցրեց ոռու մեծ ժողովուրդը բոլորժուական կարգերի տապալումից հետո: Մինչդեռ բոլորժուագիան միշտ այս կամ այն շափով քողարկում է իր քաղաքականության դասակարգային բնույթը համազգային շղարշով, պրոլետարիատը և նրա առաջավոր հատվածը՝ կոմունիստական լենինյան պարտիան լեզվական քաղաքականության հարցը դնում են պարզ ու մեկին:

Սովետական իշխանության կառուցվածքն ինքնին այդ քաղաքականության փայլուն կենսագործումն է: Բազմաթիվ ազգությունների ու ժողովուրդների եղբայրական հզոր միավորումը կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ՝ ՍՍՌ Միությունը կոմունիստական պարտիայի ծրագրի իրագործումն է:

Դեռևս կոմ. պարտիայի 10-րդ համագումարի կողմից (1921

թիվ) ընկեր Ստալինի գեկուցման առթիվ ընդունված բանաձևում ասվում է. «Պարտիայի խնդիրն է՝ օգնել ոչ վելիկուու ժողովուրդների աշխատավոր մասսաներին հասնելու առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին, օգնել նրանց... իրենց մոտ զարգացնելու և ամրացնելու մայրենի լեզվով գործող դատարան, աղմինիստրացիա, տնտեսության օրգաններ... իրենց մոտ զարգացնելու մամուլը, դպրոցը, թատրոնը, ակումբային գործը և ընդհանրապես կուզտ-լուսավորական հաստատությունները՝ մայրենի լեզվով... դնելու և զարգացնելու ինչպես ընդհանուր կրթական, այնպես և արհեստական-տեխնիկական բնույթի դասընթացների լայն ցանց մայրենի լեզվով...» (Ստալին. — «Պարտիայի հերթական խնդիրներն ազգային հարցում», Կուսարատ, Երևան, 1933 թ., էջ 25):

ԱՄԲ Միության մեջ մտնող ազգություններն ու ժողովուրդները տնտեսական-կուլտուրական և քաղաքական զարգացման տարբեր մակարդակով դիմավորեցին Հոկտեմբերյան ռեռլուցիան, — ասել է ընկեր Ստալինը, — «ազգությունների այս անհավասարությունն այն է, որ մենք պատմական զարգացման հետևանքով անցյալից ստացել ենք մի ժառանգություն, ըստ որի մի ազգությունն, այն է՝ վելիկուուականը, քաղաքական և արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած հանդիսացավ, քան մյուս ազգությունները: Այստեղից ծագում է փաստացի անհավասարություն, որը... պիտք է անպայման վերացվի՝ հետամնաց ազգություններին տընտեսական, քաղաքական և կուլտուրական օգնություն ցույց տալու միջոցով: (Նույն տեղը, էջ 5):

Ահա այս եղբայրական օգնության շնորհիվ, ինչպես այլ ազգությունները, այնպես էլ մենք, հնարավորություն ունեցանք կարծիքամանակում մեր երկիրը ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրագավառի վիճակից բարձրացնելու արդյունաբերական-գյուղատնտեսական առաջավոր երկրի մակարդակին, ստեղծելու սոցիալիստական արդյունաբերություն ու գյուղատնտեսություն, կառուցելու սոցիալիզմ:

Տնտեսական քաղաքական այս հիմքի վրա է, որ զարգացան և շտեսնված թափով առաջ ընթացան ազգային կուլտուրան և ազգային լեզուն՝ սոցիալիստական բովանդակությամբ:

Հայաստանում սովետական կարգեր հաստատելը, որի միջո-

ցով հայ ժողովուրդը բացեց յուր կյանքի դուռը և բռնեց ազգային վերածննդի ուղին, հայ կուտուրայի և մասնավորապես հայ լեզվի շտեսնված բարգավաճման ու վերելքի սկիզբն էր, նա հիմնովին փոխեց մեր լեզվի հասարակական կշիռը, արմատապես լուծեց ազգի և ազգային լեզվի փոխհարաբերությունը՝ դարձնելով մեր գրական լեզուն իրոք ազգային, այսինքն ամբողջ ազգի սեփականություն դեֆակտո և ոչ թե գեյուրե, ինչպես առաջ էր: Սովետական իշխանությունը մեր գրական լեզուն հասցրեց ժողովրդին, աշխատ նրա ձեռքը, դարձրեց նրա պայքարի ու շինարարության ամենօրյա զենքը. կուտուր-լուսավորական ցանցով, մասսայական դպրոցներով, անգրագիտության վերացմամբ, մասսայական ագիտացիայով, մամուլի, գրականության, թատրոնի, ուղիոյի միջոցով, արտադրության, գյուղատնտեսության, կուլտուրայի և կառավարման սովետական սիստեմով (նիստեր, ժողովներ, խորհրդակցություններ, կոնֆերանսներ, համագումարներ, սեսիաներ), գյուղի ու քաղաքի կապի մերձեցման միջոցով և այլ ուղիներով մեր ազգային-գրական լեզուն հասավ գործարան, հասավ գյուղ, դարձավ բանթղթակցի, գյուղթղթակցի, ցեխի վարպետի, կոլտնտեսական բրիգադավարի, տրակտորիստի լեզուն և դառնում է բոլոր կոլտնտեսականների, բոլոր բանվորների, քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորների արտադրության ու կուտուրայի, աստիճանաբար նաև կենցաղի ամենօրյա գործածության լեզուն, մեր կյանքի հումքու լծակներից մեկը:

Ազգի ժողովրդականացումը, — ահա այն ամենահիմնական նվաճումը, որին հասանք մենք սովետական պայմաններում:

Երկրորդ հիմնական նվաճումը, որ ունեցավ մեր լեզուն, այն է, որ նա դարձավ Հայկական ՍՍՌ պետական լեզուն, Սովետական Միության կողմից ճանաշված և ընդունված հավասար լեզու միութենական մյուս ուսուցութիկաների լեզուների հետ մեկտեղ: Հայ լեզուն դարձավ նաև ՍՍՌՄ ժողովությունի, Կենտգործկոմի, հատագայում Գերագույն Սովետի և պաշտոնական օրդանների լեզուներից մեկը, որով Մոսկվայում տպագրում են բոլոր որոշումները, օրենքներն ու հրամանագրերը: Նա դարձավ ՍՍՌՄ մեծ տերության օրգան «ՀՅԵՍՏԻԱ»-ի էջերում տեղ գտնող լեզու. նա հընչեց Կրեմլում Հայկ. ՍՍՌ-ի պատգամավորության և արվեստի դեկադայի մասնակիցների ընդունելությունների ժամանակ: Կրեմլում

մեր լեզվով ողջույնի բացականշություններ ու կոչեր արտասահնեցին մեծ առաջնորդն ու Սովետական Միության այլ ղեկավարները: Հայ լեզուն հպարտությամբ է շողջողում ՍՍՌՄ-ի գերբի վրա, թղթադրամների վրա, ՍՍՌՄ արտասահմանյան դեսպանությունների ցուցատախտակների վրա: Հայ երաժշտության և արվեստի հետ հայ լեզուն ևս հնչեց Մոսկվայի Մեծ Թատրոնի բեմում պարտիայի ու կառավարության ղեկավարների ներկայությամբ:

Մեր լեզվի արժանապատվությունը հասավ այնպիսի բարձրության, որի մասին երազել անգամ չէին կարող ամենալավատես մարդիկ հին պայմաններում, և մենք՝ հայերս լցված ենք այդ արժանապատվության գիտակցությամբ ու հպարտությամբ: Ցարական հասարակարգում նվաստացված, արհամարհված և նույնիսկ հալածված հայոց լեզուն վերջապես գտավ իր արժանի տեղն ու գերը մեծ և վեհ ոռու լեզվի կողքին: Այս բոլորի հետևանքն այն եղավ, որ մեր լեզուն ունեցավ խոշոր տեղաշարժներ. նա նշանակալից շափով զարգացավ և բարձրացավ այդ բարդ ֆոննեցիայի մակարդակին: Մեր լեզուն հարստացավ պետական-վարչական, իրավաբանական, դատավարական, օրենսդրական տերմիններով ու ոճերով: Կազմվեցին և կենսագործվեցին իրավաբանական, ուղմական, աշխատանքային, երկաթուղային և այլ մասնագիտական բառարաններ ու տերմինարաններ, որոնք անշափ հարստացրին մեր լեզուն: Կարևոր է այստեղ նշել նաև այն, որ հայոց լեզուն անհրաժեշտաբար ենթարկվեց ՀՍՍՌ պետական վերահսկողության ու պետական մշակման՝ թոթափելով անհատական քմահաճռուցների ու անհատական կամայականությունների այն լուծը, որ հատուկ էր նրան մինչուվետական շրջանում:

Երրորդ հիմնական նվաճումը այն է, որ հայոց լեզուն դարձավ գիտուրյան ու տեխնիկայի և բարձրագույն դպրոցի լեզու: Մեր Պետական Համալսարանը, բազմաթիվ ինստիտուտներն ու տեխնիկումները կրթել ու դաստիարակել են հազարավոր գյուղատնտեսներ, բժիշկներ, քիմիկոսներ, ճարտարապետներ, տեխնիկներ, բուժակներ հայերեն ուսուցմամբ, միայն և միայն շնորհիվ այն բանի, որ մենք այժմ ունենք բարձր մշակված գիտական լեզու Մեր լեզուն դարձավ գիլիսոփայական մտքի, մարքսիզմ-լե-

նինիզմի ճոխ, ճշգրիտ արտահայտչական միջոցների պահանջը բավարարող բարձրորակ լեզու

Զգալի առողջացում և վերելք ապրեց նաև մեր մամուլի ու Հրապարակախոսության լեզու՝ ազատվելով նախասովետական ճոռմությունից, պաթետիզմից ու վերացականությունից:

Զափազանց նշանակալից տեղաշարժներ կատարվեցին մեր լեզվի բառապաշտիքի, ուղղագրության, ուղղախոսության, իմաստաբանության և նույնիսկ ձևաբանության, զարահյուսության ու ոճաբանության մեջ: Տերմինաբանական Կոմիտեի ընդունած և օրենքի ուժ ստացած մի շարք որոշումներով կարգավորվեց և միօրինակացվեց մեր լեզվի շինարարությունը, միասնական հունի մեջ դրվեց նրա հետագա զարգացումը: Հիշենք այդ որոշումներից մի քանիսը. «Դիտական ու գիտատեխնիկական տերմինների մշակման սկզբունքները և նորմաները հայերենում» (1933 և 1939 թվերին), «Մուսերեն և օտար բառերի ու տերմինների տառադարձության նորմաները» (1933 թ.), ժնոր ուղղագրության գեկրետը» (1922 թվին) և «Մուղղագրության մասնակի բարեփոխությունը» (1940 թվին), «Հայերենի կետադրության նորմաները» (1943 թվին), երկտեսակ գրություն ունեցող մոտ 400 բառի ուղղագրության միասնականացումը» (1940 և 1944 թվերին), մոտ 250 դիվանագիտական տերմինի հաստատումը (1945 թվին) և այլն:¹

Պատմության մեջ երբեք, ոչ մի տեղ և ոչ մի լեզու այսքան կարճ ժամանակամիջոցում չի ունեցել այնպիսի առաջընթաց, այնքան արգասավոր զարգացում, որքան հայոց լեզուն այս 25 տարվա ընթացքում: Կարելի է ամենայն իրավամբ պնդել, որ մեր լեզուն աճել, բարձրացել է իր ո՛չ միայն հասարակական դերով ու գործունեությամբ, այլև՝ որակով:

Միայն գեղարվեստական գրականությունն էր, որ բավական ուշ ավարտեց յուր լեզվի քանակական կուտակումների պրոցեսը և ուշ հասալ լեզվի որակական նվաճումների՝ անհավասար մրցության մեջ լինելով լեզվական բարձր մշակույթ ունեցող նախասովետական գեղարվեստական գրականության հետ: Մեր սովորական գրականությունը իր պատանեկության ու երիտասարդության

¹ Դոցենո Ա. Ղազարյան—Ռուբենյաց Տերմինաբանական Կոմիտեի որոշումների Երևան, 1945 թիվ:

Հասակում, կատարելով հանդերձ իր մեծ, պատվական և շնորհակալ գործը, այնուամենայնիվ ուներ այդ հասակին հատուկ թերություններ ևս, մասնավորապես գեղարվեստական մշակման, երկի ձեր ու լեզվի մշակման մեջ: «Կարելի է տալ ընթերցողների մեջ մեծ ժողովրդականություն վայելող և նրանցից սիրված երկերի անուններ, ինչպես օրինակ Օստրովսկու «Խնչպես էր կոփվում պողպատը», որոնք գեղարվեստական և լեզվի պլաստիկության տեսակետից չեն կարող լիովին համապատասխանել մեր ժամանակակից ընթերցողի էսթետիկական աճած պահանջներին», — ասել է ակադեմիկոս-գրող Ալ. Տոլստոյը:¹ Հայկական սովետական գրականության մեջ ևս քիչ չեն ժողովրդականացած երկեր, որոնք իրենց գեղարվեստական, հատկապես լեզվական-ոճական մշակութով քննություն բռնել չեն կարող:

Անշուշտ թերություններ ունեն մեր լեզվական մշակութի մյուս բնագավառներն ել՝ սկսած ուղղագրությունից ու ուղղախոսությունից և վերջացրած գիտական, հրապարակախոսական, մամուլի, վարչական-իրավաբանական և այլ բնագավառներով: Բայց կարեռն այն է, որ մեր լեզուն արդեն թևակոխել է իր վերելքի մի նոր փուլը, իր զարգացման նոր և առավել պատասխանառու շրջանը, որի շեմքին արժեր վեր հանել ու նշել այն տեղաշարժները, որ կատարվել են մեր լեզվի մեջ Մեծ Հոկտեմբերի վերածնիշ շողերի տակ: Իսկ այդ տեղաշարժները, մեր լեզվի մեջ պատմա-անհրաժեշտորեն առաջ եկած տեղաշարժները մեծ են ու բազմազան: Անկարելի է մի դասախոսության ընթացքում հենց թեկուզ միայն թվարկել տեղի ունեցած փոփոխությունները՝ նույնիսկ ծայրահեղորեն սահմանափակելով օրինակները: Այդ իսկ պատճառով այսօրվա դասախոսությանս մեջ ես կըոշափեմ միայն երեք հարց. ա) Մեր լեզվի բառապաշտի մեջ կատարված անդաշարժները, բ) «Սովետական Հայաստան» բերքի լեզուն և գ) Սովետանայ գրականուրյան լեզվի բնուրագրումը:

1. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՏԵՂԱՇԱՐԺՆԵՐԸ

Մեծ Հոկտեմբերի հետևանքով հեղափոխված մեր երկրի տընտեսությունը, հասարակարգը, կուլտուրան, գաղափարախոսությունը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հոգեբանությունը չեին

¹ Ակադ. Ա. Ն. Տալուսոյ — Սովետական գրականության քառորդ դարը, Երևան, 1943 թ., էջ 32.

կարող շանդրագառնալ լեզվի բառապաշարի վրա քանակապես, ուրակապես և ֆունկցիապես. պետականությունը, նոր հասարակարգը, կուլտուրան և կենցաղը այնպիսի ֆունկցիաներ որին մեր լեզվի վրա, որպիսիք նա չէր կարող կատարել իւ հին բառապաշարով: Նա անհրաժեշտաբար վերանորոգեց, բարեփոխեց իր բառապաշարը զանազան միջոցներով ու ճանապարհներով, որոնք են.

ա) Առաջ եկան կամ գործածական դարձան նոր հասարակարգի, սովետական նոր կենցաղի ու կուլտուրայի բառեր, ինչպես օրինակ՝ շրջկենտրոն, միլիցիա, սովետ, ՄՏԿ, կոլտնտեսություն, սովխոզ, էլեկտրակայան, ռադիո, գործկոմ, օդանավ, բանթղթակից, խմբկոլ, պիոներ, հարվածային, ստախանովական, շքանշանակիր, աշխօր և այլն:

բ) Ետին պլան քաշվեցին, մոռացվեցին, անդործածական կամ համարյա անդործածական դարձան հին հասարակարգի ու կենցաղի երևությներն արտահայտող բազմաթիվ բառեր, օրինակ՝ թաղապետ, ոստիկանատուն, սկիճ, ուրար, քյոխվա, գզիր, կոռ, նահանգ, գավառ և այլն:

գ) Բառապաշարի հարստացման, գիտա-տեխնիկական տերմինների մշակման հետևանքով անհրաժեշտաբար հարություն առան գրաբար ու միջին հայերեն բազմաթիվ բառեր, օրինակ՝ պարետ, գոյ, արկ, հեծան, հաստոց, ի փառս, բնդհուպ, հանուն և այլն:

դ) Նույն նպատակով գրական լեզուն կատարեց ժողովրդական բառերի որոշ փոխառություն, դժբախտաբար շատ քիչ բանական կով և մեծ երկշուտությամբ, օրինակ՝ դահուկ, շմուշկ, տերություն և այլն:

ե) Բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն այնուամենայնիվ հանդիսացագ լեզվի սեփական բառակազմությունը, որի միջոցով համարյա ամեն օր նորանոր բառեր են կերտվում և մտնում լեզվի գանձարանը, շքինակ՝ կերպար, տեղանք, մատուց, գործարկել, գերակատարել, բնագիծ, բացառել, նիստարարություն, համակենտրոնացում, ականանետ, ականորս, առաջակալ, դիտանցք, զորացում, թեանցել և այլն և այլն:

զ) Բառակազմության նոր տեխնիկա են հանդիսանում նորագույն հապալումները, որոնք մեզ անցել են ոռուական լեզվից և

բավական բեղուն հող գտել մեզ մոտ, օրինակ՝ Համ. Կ(Բ)Պ,
ՍՍԾՄ, թՌԻՀ, աշխար և բազմաթիվ այլ հապավումներ, որոնք
բաժանվում են երեք տեսակի, այն է՝ Հնչունային-տառային
(թՌԻՀ, ԼԿԵՄ, ՍՍԾՄ և այլն), վանկային (շրջկոմ, ֆիլֆակ և
այլն), խառն, այսինքն Հնչունա-վանկային կամ Հնչունա-վան-
կա-բառային (Համ. ԼԿԵՄ, աշխար, ժողկրթբաժին, գյուղովետ և
այլն): Պետք է նշել, որ որքան էլ կենսականորեն անհրաժեշտ
ու օգտակար լինեն հապավումները, այնուամենայնիվ չի կարելի
գերազանցածել դրանց առաջացումը, որովհետև գրանցով ստեղծ-
վում են մասսաներին անհասկանալի բազմաթիվ բառեր, ինչպես
օրինակ՝ ԳԿՀ, ՈՒԿԲ, ՃՏՄ, ԳԱԶ, ՊԱՊ, ՄԱՄ, ԻԼ, ԻՄ, ԱԻՄ և
այլն:

է) Բառապատճենումները (կալկաներ) լեզվի բառապաշարի
հարստացման կարևոր միջոց են եղել բոլոր ժամանակներում, և
մեր նախորդները անցյալում պատճենել են հունական, լատինա-
կան և այլ լեզուների բառերը հաճախ տառացիորեն, օրինակ՝
արտասանել, բացասել, ապացույց, տրամադր, ժերականուրյուն
և այլն: Այդ տեխնիկան կենդանի է նաև ներկայումս ու տալիս է
խոշոր արտադրանք, ոռուսերենի ընդօրինակումով, օրինակ՝ ընդ-
հատակյա, հակագործել, հակազազ, գրահանար, ականանետ և
հազարավոր այլ բառեր:

ը) Նորագոյն փոխառություններ.— Զկա աշխարհի երեսին և
ոչ մի լեզու, որի բառապաշարը չունենա հարեւան ու հնապավոր լե-
զուներից կատարած փոխառությունները եվրոպական բոլոր լեզու-
ները անհամար փոխառություններ ունեն՝ իրարից և հոմա-լոտի-
նական լեզուներից ընդունած: Ոռուսական լեզվի մեջ ևս, հասկա-
նալիորեն, շատ են օտարազգի փոխառությունները (այսպիս օրի-
նակ՝ 1866 թվի մի բառարանում 30.000 օտարազգի բառ է նշված
ուսաց լեզվի մեջ): Եվ ուրիշ կերպ չի կարող լինել. եթե մի
լեզու ցանկանում է առաջավոր կուտուրայի մակարդակին հաս-
նել, գիտության և տեխնիկայի ճշգրիտ տերմինարանություն
ունենալ, անխուսափելիորեն պիտի հարստանա փոխառություննե-
րով: Փոխառություններից խուսափող լեզվի գիտական տերմինա-
րանությունը նշավակված կլինի կարինետայնությամբ: Զկա և չի
եղել ոչ մի «մաքուր» լեզու, այդ թվում նաև հայերենը: Բավական
է նկատի ունենալ, որ օրինակ՝ ըստ պրոֆ. Աճառյանի «Արմատա-

կան բառարանի» տվյալների, գրաբարի 10772 արժատից 4916 արմատ փոխառյալ է, ըստ որում 1405-ը՝ պարսկերենից, 209-ը՝ ասորերենից, 775-ը՝ հոնարենից, 800-ը՝ արաբերենից և այլն։ Ծիծաղելի է այսօր հիշեցնել, որ օրինակ ոչխար, բակ, գավառ, ծանր, լեզի, ծագ, ազգ, աղատ, թժիշկ, կոշիկ, հազար, արկղ, գաղութ, զույգ, մաշկ, գազար, ամբիոն, գաղափար, պալատ, կոնք, կիմա, ջուզհակ, մկրտառ, մեխակ և վերջապես Գորգեն, Սուլեն, երվանդ, Արշակ, Պողոս, Պետրոս, Հովհաննես և հարյուրավոր այլ անձնանումներ, որոնք նվիրագործված ու մաքուր հայերեն են երևում, հանդիսանում են փոխառություններ։ Եթե անցյալում այսպես է եղել իրականությունը, և հայերը անհրաժեշտ են համարել փոխառությունները, ապա նոր ժամանակներում, երբ գիտությունը և տեխնիկան խորացել, ծավալվել ու հարստացել հնա ստեղծելով տասնյակ հազարավոր նոր տերմիններ, ինչպես պիտի կարողանար հայոց լեզուն ետ շմալ առաջավոր լեզուներից, եթե չդիմեր փոխառությունների։ Եվ իզուր է մեր արևմտահայ լեզուն խորշում փոխառություններից, հորինում «հայացի» անթիվ ու անհամար «եզրեր» (տերմիններ), թարգմանում գիտական և տեխնիկական բոլոր տերմինները։ Ահա ձեզ մի քանի օրինակ այդ կաբինետային, «հայացի» տերմիններից կամ «եզրերից», որ բերում է իր գրքի մեջ Հակ. Տաշյանը.

Գործարանավոր տարրաբանուրյուն— օրգանական քիմիա

Միածնախացախական— մոնոբրոմոցետիկ:

Երկաբացախամիդ— դիացետամիդ:

Երկարախածաշրածնական— ֆերրոցիանհիդրիկ:

Մեղիլպրոֆիլամիլավշափուտ— մեղիլպրոֆիլամիլամին:

Ահա և տարրաբանական մի սիրունիկ տերմիննաշար հայերեն կնդրուկ բառից կազմված։

Կեղրեն—benzén

Կեղրալ—benzal

Կեղրին—benzine

Կեղրօւլ—benzol

Կեղրուլին—benzoline

Կեղրօն—benzon

Կնդրվաւտ – benzoyle
 Կնդրօւստեն – benzylén
 Կնդրօւստկեն – benzylidine
 Կնդրենվաւտ – benzényle
 Կնդրատ – benzoate
 Կնդրիդին – benzidine և այլն¹.

Լազէ, որ արևելահայ լեզուն իր կազմավորման օրից ունեցել է Աբովյանի, Նազարյանի և Նալբանդյանի նման առաջնորդներ և ուսուց լեզվի նման ուղեցուց, ապա թե ոչ նա էլ այժմ պիտի տառապեր կենդրուատենի, կենդրովինի և երկաթախաժաշրածնականության այս անբուժիլի մորմոքով...

Պարզէ, որ արևելահայ պրակտիկ ու ներգործուն լեզուն, որը արդյունաբերության, գյուղատնտեսության, հասարակական կյանքի ամենօրյա կարիքներն է բավարարում, չի կարող նման պրոցեսադրության հետեւ, և ի պատճիվ նրա պետք է արձանագրենք, որ նա հենց սկզբից համեմատաբար զերծ է եղել այդ վնասակար նախապաշարմունքից:

Մեր լեզուն միշտ էլ ընդունակ է եղել նորագույն փոխառությունների՝ օրինակ վերցնելով ուստ առաջավոր լեզվից և մշակվելով նրա անմիջական ազդեցության տակ, հենց նրա՝ ուսաերենի միջոցով ընդունել է հազարավոր նորագույն փոխառությունները: Ռուսաց լեզուն հանդիսացել և ավելի մեծ շափերով հանդիսանում է գիտատեխնիկական, գիտական, հասարակական անհրաժեշտ տերմիններ մատակարարող մի անսպառ աղբյուր մեր լեզվի համար: Ինքը նախօրոք ընդունած լինելով և կամ հընթաց ընդունելով անհրաժեշտ օտարազգի բառերը՝ նա արդեն մշակած ու ճշտած ձևերով ու իմաստներով այդպիսիք հաղորդում է Սովետական Միության այլ ժողովուրդների լեզուներին, որոնց թվում և հայերենին: Դժվար է պատկերացնել հայոց գիտական լեզվի զարգացումը առանց ուսւերենի այս օգնության:

Խնդիրն այն է, որ այսպիս կոչված միջազգային բառերը համարյա բոլոր լեզուներում տարբեր արտասանություն ունեն, ամեն տեղ նրանք հարմարվում են փոխանող լեզվի հնչյունաբանությանն

¹ Բառախոսական դիտողություններ հայերեն գիտական լեզվի մասին, որից Հակոբոս Տաշյան, Վիեննա, 1926 թ., էջ 147 և 160:

ու ձեւաբանությանը: Այսպես օրինակ՝ ինտերնացիոնալ բառը հնչում է տարրեր լեզուներում ենտրենասիոնալ, ինտերնատիոնալ, ինքը բնելյալ և այլն: Ո՞րը, ո՞ր ձեզ պիտի վերցներ հայ լեզուն նման դեպքերում. էլ շեմ խոսում այն մասին, որ հաճախ միևնույն տերմինը տարրեր իմաստներ է արտահայտում տարրեր լեզուներում: Ահա այս և նման բոլոր դեպքերում ուսաց լեզուն է հանդիսացել մեր առաջնորդն ու ուղեցույցը, և կարող ենք ուրախությամբ արձանագրել, որ մեր լեզուն շատ է շահել դրանից: Նորագույն օտարազգի փոխառությունների մեծագույն մասը մենք ընդունել ենք ուսաերենի միջոցով, որոնք իրենց ձևով իսկ վկայում են այդ փաստը. օրինակ՝ կոնսուլտացիա, ավիացիա, բրիգադա, տոնեա, ուսուցիչա, պարտիա և այլն:

Հոկտեմբերյան մեծ ռեոլուցիալից հետո ուսաց լեզվի ներգործությունը մեր լեզվի վրա առանձնապես ուժեղացավ. այդ մեծ իրադարձությունից հետո Սովետական Միության բոլոր ժողովուրդները սկսեցին ավելի խոշոր շափերով օգտվել մեծ, հումկու, ճշմարտացի և ազատ ուսաց լեզվից: Ռուս լեզվի ազդեցությունը 1917 թվից հետո ծավալվեց նաև արտասահմանում, նա դարձավ առաջավոր մարդկության փարոսի՝ Հոկտեմբերի փայլուն շողը ամբողջ աշխարհի համար, նրա սովետ, բոլշևիկ, կոլխոզ, ստախանովական և այլ բառերը հաստատում կերպով մտան բոլոր առաջավոր լեզուների գանձարանը: Միանգամայն հասկանալի է, որ այդ պայմաններում ուսաց լեզուն դարձավ նաև հայոց լեզվի մշակման, ամենօրյա ուղեցույցն ու ուսուցիչը: Հոկտեմբերից հետո նա տվեց հայ լեզվին նոր հասարակարգի, նոր կենցաղի, գիտության, տեխնիկայի, փիլիսոփայության հազարավոր բառեր (սովետ, տրակտոր, կոմբայն, կոլխոզ, բրիգադա, ֆակուլտետ, դեկան, մանեվր, ակտիվիստ, ստախանովական և այլն, իսկ Հայրենական պատերազմի ժամանակ՝ օկուպանտ, ավտոմատ, տարան, լեյտենանտ, մայոր, կապիտան, էվակուացիա և այլն): Ռուսաց լեզուն բացի փոխառություններ տալուց հենց միայն Հայրենական պատերազմի ժամանակ պահանջ առաջացրեց կազմելու բազմաթիվ հայերն բառեր, որոնց մի մասը, մոտ 60 բառ, հաստատվեց Տերմինարանական կոմիտեի միայն մեկ նիստում. դրանք «Սովետական Հայաստանի» ստեղծած և որդեգրած նոր բառերն են, որոնք հրապարակվեցին մեր մամուլում: Մինչև այժմ

թվարկած նորակազմ բառերից դուրս հիշատակենք պրանցից մի քանիսը. զետանց (переправа), դիպում (попадание), քեանցի, թիկնանցի, շրջանցի (обходите), կրակենց (очередь), վայրավայր (пикникующий), տորպեդակիր (торпедоносец), փոխբազուրյուն (перестрелка) և այլն:

թ) Ազգային և «միջազգային» ձևերի մրցուրյունը և դրա արդյունքները.— Գիտատեխնիկական տերմինների փոխառության հետհոկտեմբերյան ալիքը քնականաբար տատանեց մինչև այդ դորձածվող հայկական տերմիններից շատերի հենարանը, առաջ բերեց հայկական ձևի և «միջազգային» ձևի որոշ մրցություն։ Հայկական տերմինները պիտի քննություն բռնեն եվրոպական և ուսական լեզուների մեջ փորձեած ու իրենց արդարացրած տերմինների հետ։ Զժմատելով ազգային ձևը, և ընդհակառակն՝ այլ հավասար պայմաններում առաջնությունը ազգային ձևին տալով հանդերձ՝ մեր սովորական հասարակայնությունը չի կարող ոչ մի բոպի հանդուժել իմաստի, բովանդակության թեկուզ ամենափոքր աղջատում կամ անճշտություն հանուն աղդային ձևի պահպանման։ Մեզ համար առաջնությունը կարուրագույն է իսկ մեզ՝ նրա գրակարգան միջոցը։ Այդ իսկ պատճեռով մեր լեզվից ինքնարերաբար դուրս մնացին այն հայերն բառերը, որոնք անցյալում գործածվում էին առ ի շգոյն լավագույնի. այսպիսի՝ նյուրապաշտ, իրապաշտ, մեծամասնական, ենմարան, կանառական, համայնավարական, ուսուցչապետ և մի շարք այլ բառեր փոխարինվեցին մատերիալիստ, բոլշևիկ, ակադեմիա, ակադեմիկոս, կոմունիստ, պրոֆեսոր և այլ բառերով։ Որքան ծիծաղելի պիտի լիներ մեզ համար Կարլ Մարքսի «Կապիտալը» Դրամագույնի անվաննելը կամ կենինի «Մատերիալիզմ և իմպերիոկրիտիզմը» «Նյութապաշտություն և փորձաքննադատություն» հորչորդելու։

Այս մրցության մեջ դրսեորվեց մի երկրորդ երեսոյթ ևս. մի շարք հայկական տերմինների հետ և նրանց զուգահեռ սկսեցին գործածվել նաև միջազգային տերմինները, և դեռ չի կարելի ասել, թե նրանցից ո՞րն է գերակշռում և հաղթանակում, օրինակ՝ կենարանուրյուն — բիոլոգիա, երկրաբնուրյուն — գեոլոգիա, զյուղատնտես — ագրոնոմ, հասարակական — սոցիալական, զաղափարախոսուրյուն — իդեոլոգիա, տեսուրյուն — թեորիա և այլն։

Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ նաև այն, որ երբեմն հայկական ձեզ վերածվում է միջազգային բարի մի հոմանիշի և ստանում իմաստի որոշ նեղացում (սպիցիալացում), օրինակ՝ բանափրուրյան կարծես թե սկսում է նշանակել ոչ թե ֆիլոլոգիա, այլ միայն տերատարանական-լեզվաբանական ֆիլոլոգիա, ելեկոռաքարշ նշանակում է միայն էլեկտրօօզ, իսկ նրա հին իմաստի համար գործածվում է միայն տրամվայ, լսարան նշանակում է միայն սենյակ-լսարան, իսկ ունկնդիմների իմաստով գործածվում է առողիանորիա, դասընթաց նշանակում է միայն դասավանդվող դիսցիպլին, ձեռնարկ, իսկ կուրս գործածվում է դասարան և այլ իմաստներով: Այս երեսույթի միանդամայն դրական արդյունքն այն է, որ հայոց լեզվում ավելի հարուստ է դառնում, քան նույնինկ այդ միջազգային բառերի հեղինակ և փոխատու լեզուները: Այսպիս «Ես գո՞յ եմ իմ դասընթացից» և «Ես գո՞յ եմ իմ կուրսից» արտահայտությունները այլ լեզուները պետք է կազմին միենուին՝ կուրս բառով. Նույնը և այլ դեպքերում:

Մեր լեզվի բառապաշտի ճշգրտման, հարստացման և բառափոխառությունը օրինականացնելու գործում զգալի դեր խաղաց Տերմինարանական Կոմիտեի 1940 թ. որոշմամբ սովոր, սեսիա, դեպուտատ և այլ բառերի ընդունումը, որպիսի ակտով վերջնականացնես ջախչախվեց մեր մտավորականության որոշ խմբի մեջ առկա լեզվական հիմքանդությունը՝ մաքրամոլությունը: Սակայն պնտը է նշել նաև այն, որ այդ որոշումը կարծես թե տվեց մեր իմտելիքենցիայի մի ուրիշ խավի մեջ առկա այն մտանությանը, թե հայերեն խոսելիս ու գրելիս անքննադատ կերպով կարելի է գործածել ամեն պատահական օտարազգի բառ, որ ծանոթ է սրան կամ նրան: Տերմինարանական Կոմիտեի այդ որոշումից բնակչը բխում այդպիսի հետառություն: Ընդհակառակն, լեզվի մաքրության պահանջը միշտ եղել է և այժմ էլ մնում է կարերը. անշուշտ սխալվում են նրանք, ովքեր ծովանալով հայերեն բառերը սովորելու կամ մտաբերելու մեջ և կամ արհամարհելով աղդային ձեզ՝ գործածում են մուզեյ, տելիքնե, կոնցերտ, տուս, ստիլինդիա, կաֆեդրա, խոռնիկա և այլն, փոխանակ նրանց լիարժեք, հատկանալի ու Ֆիշտ հայկական ձեռքի, այն է՝ բանգարան, հեռաւու, կենաց, համերգ, բոշակ, ամբիոն, լրատու և այլն:

Ժ) Տերմինարանական բառարաններ և նրանց դեր.— Մեր

լեզվի բառապաշարի հարստացման, ճշտման, փոխառությունների ձևավորման գործում խոշոր դեր խաղացին մինչև այժմ հրատակակած մասնագիտական բառարանները, որոնց կազմությանը մասնակցիլ են մեր անվանի ու երիտասարդ լեզվաբանները և մասնավորապես Մանուկ Աբեղյանը, որի վաստակը շափապանց մեծ է մեր լեզվի բառաստեղծման մեջ:

Իրավաբանական, բժշկական, ուսումնական, աշխատանքային, բուսաբանական, շինարարական և այլ մասնագիտական բառարանները տասնյակ հազարավոր նոր բառ ու տերմին են տվել հայոց լեզվին, ու թեև կան նրանց մեջ նաև անընդունելի բազմաթիվ բառեր, այնուամենայնիվ նրանց դերը չի նսեմանում դրանից: Անվիճելի է, որ մեր բառապաշարի տեղաշարժների մեջ չափազանց խոշոր նշանակություն ունեցան Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ստալինի երկերի հայերեն թարգմանությունները: (Անշուշտ այստեղ էլ կան թերություններ, օրինակ՝ «Կուսհրատի» մի շարք հրատարակությունները երբեմն մոտենում են տառացի թարգմանության և համարյա անհասկանալի, են սուսերեն շիմացողների համար):

(Ժ) Բայափոխառությունների նոր տեխնիկան.—1943 թվին հայոց լեզվի բառակազմության, և ոչ միայն բառակազմության մեջ, կատարվեց մի այնպիսի արտաքնապես աննշան տեղաշարժ, որը դժվար թե հնարավոր լինի գերազնահատել: Ես նկատի ունիմ Տիրմինաբանական Կոմիտեի որոշումը «Սովետական Հայաստանի» գործածած էվակուացնել, կոմբինացնել, մարիլիզացնել, օկուպացնել, մոտորացնել, նորմալավորել և նորմալացնել բայերը հաստատելու և գործածության մեջ դնելու մասին: Խնդիրն այն է, որ այս 7 բառից 4-ը իրենց որակով միանգամայն տարրեր են մյուս երեքից: Մոտորացնելը, նորմալավորելը և նորմալացնելը սովետական հայկական բառակազմություններ են նորմալ և մոտոր փոխառյալ բառերից: այդպիսի կազմություններ մենք շատ ունենք, օրինակ՝ ակտիվ—ակտիվացնել, ակտիվանալ, պասիվ—պասիվանալ, տրակտոր—տրակտորավորել և այլն: Ինչ վերաբերում է առաջին շորս բառերին, այն է էվակուացնել, կոմբինացնել, մորիլիզացնել և օկուպացնել, պետք է ասեմ, որ դրանցով մի նոր գործ բացվեց մեր լեզվի բառակազմության և մասնավորապես բայափոխառության առաջ: Բանն այն է, որ հայոց լեզուն դարեր շա-

բունակ զուրկ է եղել օտարազգի բայեր փոխառնելու կարողությունից և անհրաժեշտ գեպօւմ դիմել է և մինչև 1943 թիվը դիմում էր միայն նկարագրական կամ հարազրական միջոցին. այսպիս օրինակ՝ ասում էինք մորիլիզացիայի ենրարկել, օկուպացիայի ենրարկել և այլն: Այսպիսի գեպերում ո՛չ միայն մի բառի փոխարն երկու բառ էինք գործածում, այլև՝ որոշ շափով փոխում էինք իմաստի ճշտությունը. չէ՛ որ իմաստով մի քիչ տարբեր են փոխանցել և փոխանցման ենրարկել, հարկադրել և հարկադրման ենրարկել, ուրեմն և՝ մորիլիզացնել ու մորիլիզացման ենրարկել, օկուպացնել ու օկուպացման ենրարկել և այլն: Սակայն բացի իմաստի ճշգրտումից ու բառախնայողությունից, այս նոր բառակազմությունը ունի մի ուրիշ ավելի կարևոր նշանակություն ևս. Նա հնարավոր է դարձնում փոխառնել օտարազգի բայեր այն գեպերում, երբ նրանց արմատները հայերենում գործածական չեն կամ չեն ել կարող լինել, որովհետեւ իրեն այդպիսիք նրանք գոյություն չունեն նաև ուրիշ լեզուներում. օրինակ՝ ոչ մի լեզու շունի օկուպ, էվակու, մորիլիզ, կոմբին մասերը իրեն բառեր, սակայն գիտակցելով նրանց իմաստները մորիլիզացիա, կոմբինացիա, օկուպացիա փոխառյալ բառերի մեջ՝ մենք սկսեցինք նրանցից կազմել անհրաժեշտ բայեր հայոց լեզվի բառակազմության մեթոդով, այն է՝

Կոմբին-ացիա
Կոմբին-ացված
Կոմբին-ացնել
Էվակու-ացիա
Էվակու-ացված
Էվակու-ացն-ել և այլն:

Թե ո՞ր աստիճանի կենսական է բայափոխառությունը, որին դարերով կարուտ է եղել հայոց լեզուն, երեսում է նրանից, որ շատ կարճ ժամանակում այսպիսի փոխառությունների թիվը հարստացավ նորերով, օրինակ՝ կոորդինացնել, դիֆերենցիացնել և այլն, թվում է, թե ևս կարողացա ամենահամառոտ կերպով թվարկել այն խոշոր տեղաշարժները, որ Հոկտեմբերից հետո կատարվեցին մեր լեզվի բառապաշարի մեջ:

Զանդրադառնալով լեզվի մյուս կողմերի մեջ ևս կատարված ու պակաս արժեքավոր տեղաշարժներին՝ անցնում եմ «Սովետական Հայաստան» թերթի լեզվի ակնարկին, որով բնութագրած կլինեմ սովետա-պարտիական հայ մամուկի լեզուն:

2. «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԼԵԶՈՒՆ

Խոսել «Սովետական Հայաստան» օրագրի լեզվի մասին նշանակում է խոսել սովետական շրջանի հայերենի և նրա նվաճումների մասին վերջին 25 տարվա ընթացքում, որովհետև չկա շատ թե քիչ նշանակալից դեպք մեր երկրի կյանքում, հանրակեցության, գյուղատնտեսության ու արդյունաբերության, գիտության ու տեխնիկայի, կուլտուրայի, պետական ու պարտիական կյանքի որևէ բնակավառ, որը արտացոլված չինի թերթի էջերում, իսկ այդ ամենը պահանջում էր համապատասխան լեզվական մշակույթ, խոսքային միջոցներ, ոճային առանձնահատկություններ, բառական նրբություններ, որոնք հատուկ չեն նախասովետական հայ մամուկի բավական հարուստ ու մշակված, բայց միանգամբյան այլ բնույթի լեզվին:

«Սովետական Հայաստան» իր լեզվական ուղղությամբ ու մշակույթով անմիջական ժառանգորդն է՝ նախասովետական հայ մամուկի և աշակերտել է ուսական բոլշևիկյան լրագրությանը ու նախ և առաջ «Պրավդային»; Միշտ ուղեցույց ունենալով ընկեր Ստալինի այն ցուցումը, թե «մամուկ միջոցով պարտիան ամեն օր, ամեն ժամ խոսում է բանվոր դասակարգի հետ իր լեզվով, իրեն հարկավոր լեզվով»՝ մեր Ծիսապուրլիկայի կենտրոնաթերթը ձգտել է, որ յուր լեզուն լինի պարտիայի լեզուն, «Պրավդային», այսինքն նշմարտության լեզուն, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական այն լեզուն, որով կարելի է լուսաբանել պարտիայի ու սովետական կյանքը, շինարարությունն ու պայքարը, ճակատի ու թիկունքի իրադարձությունները և մորթիկացնել աշխատավորության նյութական ու հոգեւոր բոլոր ուժերը երկրի առաջ ծառացած խնդիրները լուծելու նպատակով: Արդարացնելով այդ նպատակը՝ թերթը հասել է դպալի հաջողությունների՝ ապահովելով շարադրման պարզությունն ու հանրամատչելիություն-

նը և Հիջեցնելով հաղորդած նյութերի բովանդակության լրջությունը:

Ամենայն համարձակությամբ կարելի է ասել, որ թերթը արդարացրել է իր գործունեությունը մեկ ուրիշ կողմով և նա մեծ զարկ է տվել մեր գրական լեզվի ժողովրդականացմանը՝ գրական հայերենը բանվորների, կոլտնտեսացին գյուղացիության, շրջանային պարտիական ու սովորական ակտիվի սեփականություն դարձնելուն, դյուլի ու քաղաքի աշխատավորների աշխատանքի ու կենցաղի առօրյա լեզուն դարձնելուն: Դրա հետ մեկտեղ, «Սովետական Հայաստան» թերթը գրական լեզվի ուսուցիչ, լեզվագան բարձր կուլտուրայի, ճշմարտացի, կոնկրետ ու ճշգրիտ լեզվի օրինակ է հանդիսացել մեր շրջանացին բազմանուն մամուլի համար և այդ այն պատճառով, որ ամեն մի հաջող բառ, տերմին, արտահայտություն, որ ընդունել կամ ստեղծել է թերթը, անմիջապես որդեգրել են շրջանային թերթերը, դարձրել մասսաների սեփականություն, տարածել մեր երկրությունը մեկ:

Ուրախալի է արձանագրել, որ Հայրենական պատերազմի տարիներին, երբ առանձնապես անհրաժեշտ էր առավել շափերով ապահովել լեզվի ճշտությունն ու պարզությունը, լեզվական միջոցների սրությունն ու դիպուկությունը, «Սովետական Հայաստան» թերթը ո՞չ միայն շիշեցրեց, այլև՝ ամեն սարձուարեց յուր լեզվական կուլտուրայի մակարդակը՝ համեմատ այնպիսի բարձրության, որին երբեք չի հասել անցյալի ու ներկայի որևէ հայթերթ:

Իշարկե, վաղաժամ է ասել, թե «Սովետական Հայաստան» օրթերթը արդեն հասել է լեզվական կատարելության, թե նրա լեզուն միշտ անբասիր է ու ճիշտ, թե նա զերծ է լեզվական ու բառային աննշտություններից, անհարազատ ոճերից ու դարձվածքներից: Սակայն այս կարգի թերությունները, որոնք հետևանք են թերթի բնույթով պայմանավորվող շտապողականության, այսպիսս կոչվող թերթային տրագիֆիայով, երեմն էլ որոշ աշխատողների ճաշակով, բնավ էլ բնորոշ չեն «Սովետական Հայաստան» թերթի լեզվի համար ամբողջությամբ առած, և ամենայն հեշտությամբ կարող են հաղթահարվել առաջիկա տարիներում, եթե թերթի բարձրորակ հոդվածագիրները, թղթակիցներն ու ընթերցողները նրան լիակատար օժանդակություն ցույց տան լեզվական

շինարարության և լեզվական կուլտուրայի մակարդակը առավել բարձրացնելու գծով:

«Սովետական Հայաստանի» լեզվի ուսումնասիրությունը անհերքելիորեն ապացուցում է, որ արդեն հնացած պետք է համարել անցյալում լայն տարածում գտած և բազմիցս կրկնված այն պնդումները, թե «թերթը փշացնում է լեզուն», «վատ լեզուն թերթից են սովորում», «թերթի լեզուն աղավաղված լեզու է» և այլն: Եթե դեռ այսօր էլ գտնվում են մարդիկ, որոնք կրկնում են այդ պնդումներ՝ նրանք չարաշար սխալվում են. նրանք շեն կարողանում, ինչպես ասվում է, ծառերի արանքից տեսնել անտառը: Պատահական, մանր թերությունները չպետք է խանդարեն սկզբունքային, էական այն խոշոր նվաճումները տեսնելուն, որ ոմի՞ «Սովետական Հայաստան» թերթը լեզվական մշակույթի ասպարեգում:

Նախ և առաջ կցանկանայի նշել այն, որ մեր Ռեսպուբլիկայի կենտրոնաթերթի լեզուն կուլտուրական, կիրթ, մշակված ու մըտածված լեզու է. նա հայելու պիս արտացոլում է մեր երկրի կուլտուրայի ընդհանուր վերելքը և լեզվական բարձր մակարդակը. Նա խուսափում է ավելորդաբանությունից, չունի ավելորդ նախադասություններ ու մտքեր, ճոռումաբան արտահայտություններ: Զշացվում է, որ այստեղ ամեն ինչ կշռադատված է և ընտրված. զգացվում է մտածված լեզվական հետեղականություն: Կարծում եմ, ավելորդ չի լինի այս տեսակետից «Սովետական Հայաստան» թերթը համեմատել մեր լեզվի առաջին շինարար և առաջին լուրջ պարբերական «Հյուսիսափայլի» հետ. այն ժամանակ՝ մեր լեզվի զարգացման վաղ շրջանում «Հյուսիսափայլի» հեղինակները, հատկապես նազարյանն ու Նալբանդյանը, տանում էին լեզվական ուրոշ ու հետեղական քաղաքականություն՝ «միշտ շափի ու կշռի տակ առաջ տանելով» լեզուն: «Զիա մեկ տող, չկա մեկ խոսք, որ «Հյուսիսափայլի» գրիչը գրած լինեին առանց շափելու և կշռելու»,— ասել է նալբանդյանը:

«Հյուսիսափայլից» հետո անշուշտ միայն «Սովետական Հայաստան» թերթն է, որ այսպիս «Հափի ու կշռի տակ» է դնում յուր լեզուն, այսինքն՝ կիրառում է լեզվական որոշակի քաղաքականություն, գիտակցաբար զբաղվում լեզվաշինարարությամբ:

«Սովետական Հայաստան» թերթի այս դրական աշխատանքը

առանձնապես ուժեղ դրսեորվեց Հայրենական պատերազմի տարիներին. այս ժամանակաշրջանում թերթի էջերում նկատվեց հատուկ ուշադրություն նույնիսկ այնպիսի «մանրութների» նկատմամբ, ինչպիսին են ն, օ որոշիչ հոդերը, և, ու շաղկապները, ստորակետն ու բութը, շակերտները և նրանց գործածության հշտումները:

Հակառակ գոյություն ունեցող վարժապետական տրադիցիայի, ըստ որի ձայնավորից առաջ «բարեհնչումության նպատակով» պետք է գրել ո՛չ թե Ը, ա՛յլ Ն որոշիչ հոդը, «Սովետական Հայաստանը» ենելով իմաստի, մտքի և արտասանական պահանջներից՝ այն բոլոր դեպքերում, երբ որոշիչ հոդ ունեցող բառը տրամաբանական շեշտ է կրում կամ իրենից հետո դադար (հորանջ) պահանջում, նախընտրությունը տալիս է Ը հոդին, անկախ հաջորդ բառի սկզբի ձայնավորից. օրինակ՝ «մեր զորքերը, անտեսելով դժվարությունները և անցնելով թշնամու բնագիծը՝ ականազերծ արին կամուրջը» և ոչ թե «մեր զորքերն, անտեսելով դժվարությունները և անցնելով թշնամու բնագիծն՝ ականազերծ արին կամուրջը»; Մինչդեռ առաջին դեպքում՝ Ը հոդով, իսպառ բացառվում է սխալ ընթերցումը, և ամենաթերապրագետ մարդն անգամ ճիշտ կկարդա՝ պահպանելով անհրաժեշտ դադարը (հորանջը) «զորքերը և «բնագիծը» բառերից հետո, եթե նույնիսկ ստորակետն ու բութն էլ վիճեն, երկրորդ դեպքում՝ Ն հոդով, մանավանդ եթե ստորակետն ու բութը անտեսվեն կամ վիճեն, նույնիսկ վարժ ընթերցողը կարող է կարդալ անճիշտ դադարներով և ստանալ այսպիսի սխալ հատածները. «մեր զորքերն անտեսելով» «թշնամու բնագիծն ականազերծ արին»: Այս մեկ օրինակն էլ պարզ ցույց է տալիս, թե որքան խոշոր նշանակություն ունի «Սովետական Հայաստան» թերթի որդեգրած այս ճիշտ գորութը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ շատ շատերը թերթի հաղորդածը ոչ թե կարդում են, այլ լսում (ռադիոյով, ընթերցարանների միջոցով և այլն):

Ոչ պակաս արժեք ունի մի ուրիշ «մանրութ» ևս՝ հայոց լեզվի մեջ եղած Շևանդականից շաղկապների գործածության տարբերակումը: Ինչպես նկատվում է թերթի լեզվի ուսումնասիրությունից, խմբագրությունը միանգամայն ճիշտ կերպով և-ին տվել է անշատող շաղկապի, իսկ ու-ին՝ միացնող շաղկապի կիրառություն. օրինակ՝ «100 հրանոթ ու ականանետ և 500 հրացան», «նա

ցույց տվեց նամակներն ու հեռագրերը և ծրարն ու նկարը զբրպանը դրեց»: Ակներեւ է, որ եթե այս օրինակների մեջ ու-երբ և-ով փոխարինենք կամ և-երի և ու-երի տեղերը փոխենք, կտանանք կամ անորոշ, կամ միանգամայն սխալ միտք. օրինակ՝ «նա ցույց տվեց նամակները և հեռագրերն ու ծրարը և նկարը գրպանը դրեց»: Պետք է ափսոսալ միայն, որ խմբագրությունը ոչ միշտ է հետևողական և-ի և ու-ի կիրառության խնդրում:

«Սովետական Հայաստան» թերթը վերջին տարիներում ճիշտ լուծում տվեց նաև շակերտների գործածությանը գրքերի, պարբերականների և այլն անունների մեջ. առաջ ընդունված էր գրել «Պրավդա»-ն, «Պրավդա»-ի, «Պրավդա»-ից և այլն: Այժմ միանգամայն ճիշտ կերպով գրվում է «Պրավդան», «Պրավդայի», «Պրավդայից» և այլն, որի շնորհիվ չի տրոհվում ո՛չ միայն բառապատկերը, այլև՝ արտասանությունը:

Հընթաց իր աշխատանքների թերթը կարգավորել է նաև միշտաք բայերի խնդրառությունը. օրինակ, գրում է՝ «ղիմավորել նոր տարին, զարնանացանքը, ընտրույթյունները» և ոչ թե՝ նոր տարուն, զարնանացանին, ընտրույթյուններին. «Ճեռնարկել գրոհի, վերաշինությանը» և ոչ թե՝ գրոհը, վերաշինությունը. «գերազանցել շատերից» և ոչ թե՝ շատերին և այլն:

Նկատվում է, որ թերթը համարձակ կերպով և տեղին որդեգրել է գրաբար, ուստերեն և օտարազգի բառեր ու արտահայտություններ, ինչպես օրինակ՝ «ի փառ և ի բարօրություն», «երիցանդովյալ», «հանուն», «ընդդեմ» և այլն, «առորպեղա» «տարան», «ուեգուլյար», «օկուպացիա», «ազգեսոր» և այլն: Սակայն խմբագրությունը պակաս համարձակություն է ցուցաբերել բուն ժողովրդական լեզվից օգտվելու գործում («տերություն», «քոթակտալ», «ավարա»):

Պետք է նշել նաև, որ թերթը կատարել է արձակի ճկունությունը խախտող լուլյայն ընդունված այն կանոնը, ըստ որի հատկացուցիչը պետք է նախադաս դրվի հատկացյալից, և օգտվելով գեղարվեստական լեզվին, մանավանդ շափածոյին վերապահված արտոնությունից՝ ետադաս հատկացուցչի է դիմել այն դեպքերում, երբ այլապես նախադասությունը պիտի ճապաղեր և իմաստի շփոթություն առաջ գար. օրինակ, թերթը գրել է՝ «Ճանքերի միավորումը կհասցնի ամենաարագ ջախջախմանը հիտերյան»

Գերմանիայի, որն ամենավտանգավոր թշնամին է ամբողջ մարդկության»: Այլ գեպքում այս նախադասությունը պիտի ընդուներ հետևյալ տեսքը. «Զանգերի միավորումը կհասցնի հիտլերյան Գերմանիայի ամենաարագ զախցախմանը, որը (հիտլերյան Գերմանիան) ամբողջ մարդկության ամենավտանգավոր թշնամին է»: Այս գեպքում, ինչպես ակներկ է, «Հիտլերյան Գերմանիան» բառերը պետք է կրկնվեին փակագծի մեջ, և նախադասությունը զգացի շափով ճապաղեր:

Անուրանալի է «Սովետական Հայաստան» թերթի խոշոր աշխատանքը մեր լեզվի բառապաշարի ճշգրտման, հարստացման և տերմինաշխնարարության ասպարեզում ևս: Վերջին տարիների ընթացքում նա ստեղծել և գործածության մեջ է դրել հարյուրավոր նոր բառեր ու տերմիններ գիտության ու տեխնիկայի և հանրակեցության ամենաատարբեր բնագավառներից: Ահա դրանցից մի քանիսը. ականանետ, ականաձիգ, առաջակալ, դետանց, դիպում, դիտանցք, կրակահերթ, լրատնկում, խողովակալում, փոշեմրիկ, թերթբունել, գեսպանորդ, ականորդ, ցատկ և այլն:

Առանձնապես արժե նշել այն էական նորմուծությունը, որ կարողացավ իրականացնել «Սովետական Հայաստան» թերթը բայցը փոխառության գծով: Ինչպես հայտնի է, հայ լեզոն զուրկ էր օտարազգի բայցը փոխառնելու միջոցից, եթե համապատասխան բայցի արժատը կամ հիմնական ձեր հայերենում նախօրոք չկար, և ստիպված էր դիմելու նկարագրական կամ շրջասական միջոցի, օրինակ՝ դիֆերենցիացիա կատարել կամ դիֆերենցիացիայի ենրարկել (դիֆերենցիավորել), մորիլիզացիա կատարել կամ միբիլիզացիայի ենրարկել (մօբիլիզացիավորել) և այլն: Թերթը համարձակ փորձ կատարեց հրաժարվելու այդ շրջասական ձևերից և մեր լեզվին տվեց բայց փոխառնելու նոր միջոց: Կարճ ժամանակի ընթացքում թերթն սկսեց գործածել օկուպացնել, մորիլիզացնել, էվակուացնել, լիկվիդացնել¹ և այլն, որոնք արագ տարածվեցին ու մասսայականացան և նախադեպ դարձան նման նորանոր բայցը փոխառնելու համար (կոորդինացնել, կոմբինացնել, դիֆերենցիացնել, դեմարկացնել և այլն): Որ բայցը փոխառնելու

^{1/} Եմ կարծերով, այս լիկվիդացնել բայց ինքը պետք է ըլիկվիդացվի, այսինքն վերացվի, որովհետեւ դրա դիմաց ուսենք վերացնել և լաւագնել միանգամայն հաջող բայցերը:

միջոցի կարիքը վաղուց է զգացել մեր լեզուն, ապացուցվում է նրանով, որ այդպիսի փորձ կատարել է մեր առաջին լեզվաշինարարներից մեկը՝ Ստ. Նազարյանը. դեռևս 1856 թվին նա գործածել է «պոլարիզանում է» և «էլեկտրիզանում է» բայերը. Ինչպես ակներև է, միջոցը նույնն է, այն տարբերությամբ միայն, որ մինչդեռ Նազարյանը գործածել է չեզոք սեռի բայեր, «Սովետական Հայաստանը», ըստ անհրաժեշտության, դիմել է ներգործական-պատճառական բայերի փոխառությանը. Ինքնին հասկանալի է, որ հարկ եղած դեպքում մենք ևս կարող ենք արդեն մեր ունեցած բայերից կազմել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռի բայեր, օրինակ՝ մորիլիզացնել—մորիլիզացվել—մորիլիզանալ, էվակուացնել—էվակուացվել—էվակուանալ և այլն:

Դժվարը առաջին բայլն էր,իսկ այդ բայլը «Սովետական Հայաստանին» հաջողվել է. նրան հավանություն է տվել մեր հասարակայնությունը, նրա այդ բայլը օրինականացրել է Տերմինարանական Կոմիտեն:

Չի կարելի անուշադրության մատնել և այն հանգամանքը, որ «Սովետական Հայաստան» օրաթերթի վերջին տարիների համարերը հակում են ցույց տալիս դեպի կենդանի ու պատկերավոր խոսքը և մանավանդ խոսում ու արտահայտիչ վերնագրերը, խորագրերն ու ճակատները: Ո՞վ կարող է մոռանալ այն անջնջելի տրպավորությունը, որ ունեցավ «Սովետական Հայաստանի» համարը «Զա՞րկ, Կովկաս» արտահայտիչ ու թևավոր ճակատով այն օրերին, երբ թշնամու հորդաները մոտեցել էին Կովկասի մատուցներին ու անմիջականորեն սպառնում էին հայերի, վրացիների, ադրբեջանցիների պատմական օրբանին: Այո՛, անուրանալի է Անդրկովկասի երեք ժողովուրդների լեզուներով խոշորատառ տպված այդ ճակատ-խորագրի մարտական, պայթուցիկ ուժը ճակատի ու թիկունքի անդրկովկասցի մարտիկների ու աշխատավորների համար այն ահեղ օրերին: Ոչ պակաս հաջող էր այն ճակատ-խորագրի, որոք «Սովետական Հայաստանի» խմբագրությունը արտահայտեց հաշժողովրդի վերջին հորդորը և կարոտագին սպառնումը յուր քաջարի զավակներին Բեռլինի փառապանծ գրավման ու պատերազմի ավարտման օրերին. «Հա՛յ մարտիկներ, վերջին զարկի փառնով դարձեք!»,— այսպես էր ձևավորված այդ ճակատը:

Մրանց կարելի է ավելացնել շատ ուրիշ վերնագրեր ու խորա-

գրեթ, որոնք առաջին իսկ հայացքից քաշում են ընթերցողին և նրա ուշադրությունը կենտրոնացնում այս կամ այն նյութի վրա, օրինակ՝ «Ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում», «Մորի՞կ, թե՞ մրիկ» և այլն:

З а ш н р а с а ж и т ы г м а р и т п и ю т и է , о р պ ետական կ արեոր վ ա վ ե -
րագրերի , կ առավարական ո ր ո շ ո ւ մ ն ե ր ի և մ ա ն ա վ ա ն դ խ ո ս ք ի մ ե ծ
վ ա ր պ ե տ ը ն կ ե ր Ս տ ա լ ի ն ի ե լ ո ւ յ թ ն ե ր ի ո ւ հ ա ռ ե ր ի հ ա յ ե ր ե ն ա մ ե ն ա -
Ֆ ի շ , պ ա ր զ ո ւ ա ր տ ա հ ա յ տ ի թ ա ր գ մ ա ն ո ւ թ յ ո ւ ն ե ր ը տ ա լ ի ս է « Ս ո -
վ ե տ ա կ ա ն Հ ա յ ա ս տ ա ն ը » : Ս ա կ ա յ ն հ ա յ տ ն ի է , ո ր հ ա մ ա խ մ ի շ ո ւ թ ո ւ -
պ ա ր զ թ ա ր գ մ ա ն ո ւ թ յ ո ւ ն ն է լ կ ա ր ո ղ է գ ո լ ո ր շ ա ց ն ե լ բ ն ա գ ր ի մ ե ջ
ե ղ ա ծ հ յ ո ւ թ ե ղ ո ւ թ յ ո ւ ն ո ւ ո գ ի ն , ե թ ե բ ն ա գ ր ի ա յ ս պ ե ս կ ո չ վ ա ծ ա ն -
թ ա ր գ մ ա ն ե լ ի ա ր տ ա հ ա յ տ ո ւ թ յ ո ւ ն ե ր ը թ ա ր գ մ ա ն ո ւ մ է մ ա թ ի մ ա տ ի -
կ ա կ ա ն ճ շ տ ո ւ թ յ ա մ բ , տ ա ռ ա ց ի , ն յ ո ւ թ ա պ ե ս՝ չ գ տ ն ե լ ո վ ն ր ա ն ց հ ա -
մ ա ր ժ ե բ ն ե ր ը թ ա ր գ մ ա ն ո ւ թ յ ա ն լ ե զ վ ի մ ե ջ : Ա յ ս կ ա պ ա կ ց ո ւ թ յ ա մ բ
հ ա ր կ ա վ ո ր է ն շ ե լ , ո ր « Ս ո վ ե տ ա կ ա ն Հ ա յ ա ս տ ա ն » թ ե ր թ ը շ ի գ ն ա ց ե լ
թ ո ւ յ լ դ ի մ ա գ ր ո ւ թ յ ա ն ճ ա ն ա պ ա ր հ ո վ , ա յ լ ս տ ե ղ ծ ա գ ո ր ծ ա կ ա ն մ ե ծ
շ ա ն ք է թ ա փ ե լ թ ա ր գ մ ա ն ա կ ա ն կ ա ր ե ո ր ն յ ո ւ թ ե ր ի մ ե ջ լ ե զ վ ի կ ե ն -
դ ա ն ո ւ թ յ ո ւ ն ո ւ պ ա տ կ ե ր ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ը և ս պ ա հ ա ն ե լ ո ւ ո ւ լ զ ո ւ -
թ յ ա մ բ : Բ ա վ ա կ ա ն է վ ե ր հ ի շ ե լ , թ ե ի ն շ պ ի ս ի հ ա զ ո ղ ո ւ թ յ ա մ բ է
թ ա ր գ մ ա ն ե լ թ ե ր թ ը ը ն կ ե ր Ս տ ա լ ի ն ի ե լ ո ւ յ թ ն ե ր ի մ ե ջ ե ղ ա ծ հ ե տ ե յ ա լ
ա ր տ ա հ ա յ տ ո ւ թ յ ո ւ ն ե ր ը՝ « Ն ե դ ո յ ս ր , բ ы տ ь բ ы ж и в ү » , « Կ ո մ у պ ր օ -
г и դ а ն ы ш к и , կ ո մ у ս и ն я կ и դ а ն ы ш к и » , « Վ ո լ կ ա բ ы ո ւ ն ե զ ա յ ո ւ թ յ ա մ բ ,
ո ւ ր ո ն ց թ ա ր գ մ ա ն ա կ ա ն հ ն ա ր ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն ը հ ա կ ա գ ա ր ձ հ ա մ ե մ ա տ ա -
կ ա ն է ն ր ա ն ց դ ի պ ո ւ կ ո ւ թ յ ա ն ո ւ ն ե ր գ ո ր ծ ո ւ մ ո ւ ժ ի ն : Ս ա կ ա յ ն թ ե ր թ ը
կ ա ր ո ղ ա ց ե լ է ո չ թ ե « մ ի կ ե ր պ » , ա յ լ շ ա տ հ ա զ ո ղ ե լ ք գ տ ն ե լ՝ հ ե -
տ ե յ ա լ ձ ե լ ո վ « թ ա ր գ մ ա ն ե լ ո վ » ա յ դ ա ր տ ա հ ա յ տ ո ւ թ յ ո ւ ն ե ր ը . « Ա շ ը
շ ո ւ ն ի ո ւ թ ի շ ա շ ի ն , մ ի ա յ ն թ ե փ ր կ ի ի ր կ ա շ ի ն » , « մ ա մ » բ լ ի թ ո ւ
կ ա ր կ ա ն դ ա կ , ո ւ մ ծ ե ծ ո ւ ա պ տ ա կ » , « Գ ա յ լ ի ն ս ա տ կ ա ց ն ո ւ մ ե ն ո ՛ շ
թ ե ն ր ա հ ա մ ա ր , ո ր ո ւ ն ի գ ո ր շ ա գ ի , ա ՛ լ ն ր ա հ ա մ ա ր , ո ր կ ե ր կ է կ
մ ա ր ի : »

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Սովորական Հայաստան» թերթը լեզվի նկատմամբ ունեցած իր ուշադիր ու հոգատար վերաբերմունքի հետևանքով մեծ ներդրում է կատարել մեր լեզվաշինարարության մեջ՝ օգտագործելով բոլոր հնարավորություններն ու աղբյուրները. գրաբար տարրերով ու դարձվածքներով՝ վեհու-

թյուն ու հանդիսականություն, ժողովրդական բառ ու բանով՝ կենդանություն ու պատկերավորություն, փոխառյալ բառերով և սեփական բառակազմությամբ ճշգրտություն ու հարստություն է ուվել նա մեր մայրենի լեզվին և դրանով հիրավի վաստակել է այն պատիվը, որ կոչվի հայոց լեզվի շինարար և հայոց լեզվի ուսուցիչ:

Սակայն «ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում»: Ուստի ավելորդ չի լինի ցանկություն հայտնել, որ թերթը ապահովի լեզվական մշակույթի բարձր մակարդակը բոլոր համարների և բոլոր հոդվածների մեջ՝ հետևողականորեն պահպանելով իր ընդունած սկզբունքները և այսուհետև ևս առաջ տանի իր լեզվի՝ հայոց լեզվի զարգացումը:

Իվերջո, կարծում եմ, կարելի է հետեւյալ ցանկությունները հայտնել թերթի լեզուն առաջիկայում առավել բարձրացնելու համար.

ա) որ թերթը հատուկ ուշադրություն դարձնի շարահյուսական կողմի վրա և խուսափի հայ լեզվի կանոններին ու հասկանալիության պահանջներին անհարիր դեպքերից նախադասության կառուցվածքի մեջ,

բ) որ լեզվի ճշտության, պարզության ու հանրամատչելիության հետ ապահովի բառերի ներդաշնակ ու բարեհնչում շարդասությունը նախադասությունների մեջ,

գ) որ թերթի ստեղծագործական կոլեկտիվը հետևողականութեն առաջ տանի լեզվի ժողովրդայնացման իր գիծը՝ ավելի համարձակորեն օգտվելով ժողովրդի բառութանի կենդանի, պատկերավոր արտահայտություններից, ձևավոր խոսքերից, սեղմ ու հատու դարձվածքներից, ինչպես և արտադրական ու կենցաղային տերմիններից, իհարկե, միշտ խմբագրելով, հարթելով ու գրական տեսք տալով ժողովրդական փոխառություններին և խուսափելով տեղայնությունից,

դ) որ թերթը ավելի մեծ ուշադրություն դարձնի իր բառապաշտի հարստացմանը՝ լրիվ օգտագործելով մեր հարուստ հայոց լեզվի հոմանիշների ամբողջ ճոխությունը,

ե) որ նոր փոխառությունները կատարի շափակոր և պատճառաբանված կերպով,

գ) որ ճշտի օտարազգի հատուկ անունների տառադարձության
խնդիրները:

Պետք է հավատացած լինել, որ ապահովելով իր լեզվի շարահյուսական-շարադասական, հնչական-գեղագիտական և ուղղագրական կողմերը ևս՝ «Սովետական Հայաստան» թերթը առաջիկա տարիներում մեր գարավոր հայ լեզուն կբարձրացնի զարգացման մի նոր աստիճանի:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԽՆԴԻՐԸ

Մեր լեզվի ընդհանուր վերելքի ու ծաղկման ֆոնի վրա անշուշտ զգալի նվաճումների հասավ նաև գեղարվեստական գրականության լեզուն: Սովետական հայ գրականության լեզուն դարձավ առավել պարզ ու մատչելի, հատու և ներգործուն: Նախասովետական շրջանում հայ գրականության լեզվի մեջ իշխող մինոր գամմաները (ողբ, թախիծ, կարոտ և այլն), լեզվական պասիվ ու շերմոցային ոճերը տեղի տվին սովետական գրականության լեզվի առնական ու հաղթ մաժոր գամմաների առաջ (պայքար, շինարարություն, հեռանկարի պարզություն, կենսականություն, հասարակական, կոլեկտիվիստական գաղափարներ, սեր և ատելություն), լեզվական ակտիվ ու բնական ոճերի առաջ. նախկին վերացականությունը, անառարկայությունը, ճոռոմությունը դիշեցին որոշակի գաղափարայնության, նպատակասլացության, առարկայնության առաջ: Այս կապակցությամբ շահետք է մոռանալ, որ նոր բովանդակության, նոր իդեոլոգիայի համար գեղարվեստական նոր ձևեր, ոճեր գտնելը, մշակելը և նույնիսկ փոխառնելն ու թարգմանելը մեծ դժվարություններ էին հարուցում սովետական, հաճախ երիտասարդ ու անփորձ, գրողների առաջ, որոնք այդ պատասխանատու գործը կատարում էին առանց նախօրինակից առանց ուսուցչի՝ անհրաժեշտաբար օգտվելով, իհարկե, ուսական սովետական գրականության վարպետների փորձից:

Գեղարվեստական լեզվի նոր ոճ, մանավանդ նորատիպ գրականության համար հարմար և նրանից բխող բարձրորակ նոր ոճ մշակելը շափազանց դժվար գործ էր, իսկ մեր սովետական գրողներն էլ սովորաբար ժամանակ, երբեմն ցանկություն և կարողություն չեին ունենում ստեղծագործական նման աշխատանքի հա-

մար: Նրանք իրավամբ մտահոգված էին առաջին հերթին իրենց ստեղծագործության բովանդակությամբ, գաղափարական հագեցվածությամբ և ամենօրյա անմիջական ներգործության հատկությամբ:

Քանակի և հրատապության հրամայական պահանջի առաջ հաճախ անխուսափելիորեն ետին պլանն էր մղվում երկի գեղարվեստական որակի, նրա ոճաբանական պատկերավորման պահանջը:

Վերականգնման շրջանում սովետական գրողը պետք է օրը օրին հասներ ավերված երկաթուղին վերականգնող գյուղացուն, ոգերորեր նրան, նշավակեր մեր երկրի ու մեր ժողովրդի այդ ժայր աստիճանի քայլայման հեղինակ ոճաբանության՝ դաշնակներին ու նրանց ազգակործան քրաղաքականությունը, քարոզեր ինտերնացիոնալիզմը և մասսայականացներ կոմպարտիայի ու սովետական իշխանության գաղափարները, սոցիալիզմի գաղափարները:

Վերականգնման շրջանում նա պետք է օրը օրին հասներ գործարաններ և էլեկտրակայաններ կառուցող բանվորին, ծաղրեր գլուխ պահողներին ու չլողներին, օգներ աշխատավոր գյուղացուն նրա շինարարության ու պայքարի մեջ. գյուղի կողեկտիվացման տարիներին նա պետք է արտացոլեր սրված դասակարգային պայքարը, մերկացներ կուլակի ու ենթակուլակի կեղտոտ, վնասակար հոգին ու գործելակերպը, մասսայականացներ կոլեկտիվիզմի գաղափարները:

Ստալինյան հնագամյակների տարիներում նա պետք է առավել սուր հնչեցներ իր քնարի մարտական լարերը դասակարգային թշնամու մնացորդների, գործակալների՝ նացիոնալիստական-տըրոցկիստական-բուլսարինյան վիժվածքների դեմ, ճախարակեր նոր աշխարհ կառուցող, սոցիալիզմի շենքն ավարտող մարդու սոցիալիզմի հպարտ քաղաքացու, մարտիկի և շինարարի հոգին: Այդ պետք է աներ և անում էր սովետական գրողը, այդ էր նրա կոշումը ամենից առաջ. քարի ու կրի, գութանի ու հրացանի թեմաներից նա անցավ գործարանի ու մերենայի, տրակտորի ու տանկի մոտիվներին, հասավ տրակտորն ու մեքենան կառուցող բանվորի, կողեկտիվ գյուղատնտեսության և արդյունաբերության հերոսների՝ հարվածայինների, ստախանովականների, սոցիալիզ-

մի առաջավոր մարտիկների, մեր ղեկավարների ու առաջնորդների՝ կերպարների կերտման խնդիրներին:

Այս և մի շարք այլ պատճառներ, որոնց ես անդրադարձել եմ «Մեր գրականության լեզվի խնդիրները»¹ թեմայով աշխատությանս մեջ, բայց առողջ ու առաջատար, իր բովանդակային և ֆունկցիոնալ կողմերի մեջ խոշոր նվաճումներ ունեցող լեզուն այնուամենայնիվ մինչև վերջին տարիները դեռևս զգալի շափով ետ էր մնում ո՛չ միայն մեր կուլտուրայի և մասնավորապես մեր գրական ընդհանուր լեզվի խոշոր թոփշրից ու բարձր մակարդակից, այլև՝ իր իսկ գաղափարական ու ֆունկցիոնալ նվաճումներից։ Մեր գրականության լեզուն երկար ժամանակ շեր կարող պարծենալ իր լեզվական-ոճային, գեղարվեստական մշակման կողմից շոշափելի առաջընթացով, և իրավացի էր «Սովետական գրականության» խմբագրությունը, որն իր խմբագրական հոդվածում գրում էր. «Այս տեսակետից մեր նվաճումները դեռևս անբավարար են» («Սովետական գրակ.» № 6—7, էջ III, 1943 թ.): Գրականության լեզվի հարցերի նկատմամբ վերջին տարիներում ցուցաբերված առանձնապես մեծ հետաքրքրությունը սովետական գեղարվեստական գրականության նոր վերելքի թելադրանքն էր հանդիսանում այն միանգամայն պարզ ու հասկանալի պատճառով, որ լեզվի բարձր մշակութի համար մղվող պայքարը բարձրորակ գրականության համար մղվող պայքարի մի մասն է։

Մենք կանգնած ենք սովետական գրականության լեզվի մի նոր փուլի առաջ. մեր սովետական գրականությունը և նրա լեզուն ավարտեցին իրենց երիտասարդության շրջանը և թևակոխում են իրենց այրական հասակը։ Մեր գրականության և նրա լեզվի այրացումը զուգադիպեց սովետական ժողովրդի սրբազն պատերազմին ընդդեմ գերմանա-ֆաշիստական հրոսակախմբերի։

«Պատերազմը սկիզբ դրեց մի նոր էտապի, նրա մի նոր ժամանակաշրջանի։ Մենք ներկա ենք մի զարմանալի երևույթի։ Թվում էր, թե պատերազմի դըրդյունը պետք է խլացնի բանաստեղծի ձայնը, պետք է կոպտացնի-հասարակացնի գրականությունը, նրան տեղափորի խրամատի նեղ ճեղքի մեջ։ Բայց պատերազ-

¹ Գրողների տանը 1943 թվի հուլիսի 12-ին կարդացված դասախոսությունը

մող ժողովուրդը ավելի ու ավելի բարոյական ուժեր գտնելով իր մեջ արյունահեղ ու անողոք պայքարում, որ միայն հաղթանակ կա կամ մահ կա, ավելի ու ավելի համառ կերպով է մեծ խոսքեր պահանջում իր գրականությունից: Եվ սովետական ժողովրդական գրականությունը պատերազմի օրերին դառնում է ճշմարտապես ժողովրդական արվեստ, ժողովրդի հերոսական ոգու ձայնը: Նա գտնում է ճշմարտության խոսքեր, բարձրարվեստ ձեւեր և այն աստվածային շափը, որ հատուկ է ժողովրդական արվեստին: Դա թեև լոկ սկիզբն է, բայց մեծի սկիզբ է»,¹ — գրում էր Ա. Տոլստոյը:

Եվ սովետական անվանի գրողի այդ մարդարեական խոսքը կարճ ժամանակից հետո իր հաստատումը գտավ ո՛չ միայն ոռւսական, այլև՝ մեր հայ գրականության մեջ: Հայրենական պատերազմի վերջին տարիներում իրար ետևից հրապարակվեցին սովետահայ հեղինակների այնպիսի երկեր, ինչպիսիք են Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպը (1944 թ.), Ն. Զարյանի «Արագեղեցիկը» դիցարանական ողբերգությունը (1944—1945 թ. թ.), Վ. Խեշումյանի՝ հայ միջնադարը պատկերող նովելների «Զվարթնոց» ժողովածուն (1945 թ.),² մեր շնորհալի բանաստեղծներ Սարմենի, Գ. Սարյանի, Ս. Տարոնցու, Հովհ. Շիրազի և ուրիշների լավագույն բալլագները, պոեմներն ու բանաստեղծությունները: Այս բոլոր գործերը իրենց որակով ու մշակույթով և մանավանդ լեզվական-արտահայտչական միջոցների մակարդակով ավելի բարձր են, քան սովետահայ գրականության նախորդ փուլերի երկերը և նույն հեղինակների նախապատերազմյան ստեղծագործությունները: Այստեղ անշուշտ դեր է խաղում ո՛չ միայն այն, որ առնականացել է մեր գրականությունը և աճել են մեր հեղինակները, ո՛չ միայն այն, որ Հայրենական պատերազմի տարիներին մեր գրողները լուելայն մրցակցում էին, որ ուժերի առավել լարումով, ամենաբարձրորակ ու ներգործուն երկեր տալով կատարեն իրենց նվիրական պարտականությունը Հայրենիքի հանդեպ, այլև՝ այն, որ սովետահայ գրողներից ոմանք իրենց խոշոր կտավները կերտեցին պատմական թեմատիկայով, որը լայն հը-

¹ Ակադ. Ա. Տոլստոյ—Սովետական գրականության քառորդ դարը՝ Երևան, 1943 թ., էջ 31—32:

² 1943 թվին լույս էր տեսել Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»,

Նարավորություններ էր բացում պատմական հտահայացքով (ռետրոպեկտիալով) օժանդակելու արդիականությանը: Եվ հենց դրա շնորհիվ է, որ մեր գեղարվեստական գրականությունը մի քայլ ևս առաջ գնաց, որակով մի աստիճան ևս բարձրացավ և, կարելի է ասել, բաց հակատով կանգնեց նախասովետական հայ կլասիկ գրականության հանդեպ: «Բանն այն է, — ասաց Ն. Զարյանը ՍՍՌՄ Գրողների Միացյալ Վարչության 10-րդ պլենումում, — որ պատմական գործերից մի քանիսը որակով բարձր են Հայենական պատերազմի արձակից»:¹

Քանի որ գրական երկի բարձր որակը անկասկածորեն պայմանավորված է լեզվական բարձր մշակույրով, ապա միանգամայն բնական է, որ վերը նշված երկերը իրենց լեզվական-ոճացին հատկանիշներով ևս արդարացնում են իրենց: Եվ իրոք, պատմողական պլաստիկ ու ճկուն լեզուն, բնության, իրադրության ու հոգեկան աշխարհի նկարագրության պատկերավոր, պարզ, բայց գունագեղ ոճը, բառապաշտիքի ու հոմանիշների հարստությունը, տրամախոսությունների շափակոր-պատմական երանգավորումը, ընդունակ նախադասությունների ու դինամիկայով հարուստ պարբերությունների հոյակապ կառուցվածքը, ժողովրդական բառուրանի պատշաճ ու կիրթ համեմունքը մի առանձին հմայք են տալիս Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպին: Ցավալի է, այնուամենայնիվ, որ գեղարվեստական խոսքի այնպիսի վարպետ, ինչպիսին է Ստ. Զորյանը, ոչ միշտ է հոգատար եղել իր վեպի լեզվի «մանրութիք» նկատմամբ և տպագրության է հանձնել էջեր, որոնք տեղ-տեղ կարոտ են քերականական շտկման:

Իր «Արա Գեղեցկի» համար Նաիրի Զարյանը գտել է միանգամայն ներդաշնակ տաղաշափություն, ստեղծել գրամատիզմով հագեցած դրություններին և տրամախոսություններին ու մենախոսություններին միանգամայն համապատասխանող հարուստ, հուզական ու լարված ոճ և սիրային գեղումների թրթուն ու շերմ խոսք. Հեթանոս Հայաստանի բույրն ու թույրը նա արտացոլել է լեզվական վառ պատկերներով և վեհափառ գրաբարի բառագանձի ու ձևերի օգտագործմամբ: Արժեք սակայն մի քիչ ավելի փոքրացնել պատմական ոճավորման շափու:

¹ «Գրական թերթ», 1945 թ. № 18 (ընդգծումը իմն է: — Դ. Ս.):

Խաղաղ և անդորր պատմողական լեզվով, պատմական ոճավորման միանգամայն շափակոր դողայով, լեզվական նրբությունների գգուշավոր ու մտածված օգտագործմամբ հայ գրականության մեջ միանգամայն նոր երևույթ է Վիգեն Խեշումյանի «Զվարթնոց» ինչպես իր թեմատիկայով ու մարդկանցով, այնպես էլ իր ոճով: Թիշ հեղինակների է հաջողվում անմիջապես ստեղծել իրենց սեփական ոճը, և պիտք է ասել, որ Խեշումյանին այդ հաջողվել է «Զվարթնոցի» միջնադարյան նովելները, որոնց նյութն է հոգևոր ու մարմնավորի, եկեղեցու և աշխարհի, ճգնավորականի ու աշխարհիկի բախումը՝ միշտ վերջինիս հաղթանակով, ներկայացված են լեզվական ֆակտուրայի այնպիսի գումագեղությամբ, որ առնելիք է շնչող, տրոփող ու բարախող կյանքից և սիրել է տալիս Հայաստանի հողը, ջուրը, ծաղիկը, բնությունը և առավել ևս մարդուն՝ իր հարուստ ու պարզ հոգով, կենսասեր ու շինարար ոգով: Հովվերգական անմիջականություն ու պարզություն, — ահա թե ինչն է հատկանշական Խեշումյանի ոճի համար: Պետք է լինաւում լինել, որ Հեղինակը իր հաջորդ երկերով ո՞չ միայն չի հասթափեցնի իր ընթերցողներին, այլև առավել կհղի յուր լեզուն ու ոճը՝ զգուշանալով մանավանդ լեզվական նատուրալիզմից ու մթամածությունից, որպիսի վտանգ նրան կարող է սպառնալ:

Ես թվարկեցի վերջին տարիներում հայ գրականության մեջ իրենց լեզվական կուլտուրայի մակարդակով առավել աշքի ընկած երկերը: Դրանք անառարկելիորեն վկայում են, որ սովետական հեղինակները արդին սկսել են հատուկ ուշագրություն դարձնել իրենց ստեղծագործությունների լեզվի մշակման հարցերին, որմեր բազմադարյան հայ լեզուն ջուռով կիփայի նաև ժամանակակից կյանքը և մեծ Հայրենական պատերազմը պատկերող խորացոր գեղարվեստական կտավների մեջ: Դրա լավագույն առհավատշան են վերոհիշյալ երկերը, դրա ակնբախ գրավականն է այն, որ սովետահայ բանաստեղծը այլևս չի կարողանում զսպել յուր սերը մեր մայրենի լեզվի հանդեպ և այդ սիրուց աշուող դարձած՝ հայոց լեզվի գովքն է անում: Թող ուրեմն մեզ ներվի հայոց լեզվի զարգացման քսանհինգ տարվա նվաճումների նկարութիւնը ավարտել ն. Զարյանի «Հայոց լեզվով»:

Արի, եղբա՛յր, փառաբանե՛նք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն:

Նա առաջին կանչն է եղել դյուցազնական մեր նախահոր,
Օրորոցից մեղ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:

Քերթողահայր Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեղ երազ ու երգ և ճանապարհ հայոց լեզուն:

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշումը գիշերներին,
Կկորչեինք, եթե ճամփին շբոցկլտար հայոց լեզուն:

Քանի՛ ցեղեր ցամաքեցին, ինչպես հեղեղն ավաղի մեջ,
Բայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն:

Նրան իր ձեռքն է վերցրել մեր պետությունն աշխարհաշեն,
Այդ վեհ ձեռքով է բարձրանում դեպի կատար՝ հայոց լեզուն:

Այսօր էլ նա բռնության դեմ փայլատակում է բարկացայտ,
Հերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն:

Ուրեմն եկ փառաբանե՛նք, փայլեցընե՛նք թրի նման,
Թր զրնգա արեի տակ հավետ պայծառ հայոց լեզուն:



Շաոյրկը Ե. Մ. ՏՕԿՈՎԻՆԻ

ԴՐԱԳԵՆ ՍԵՎԱԿ

**СОВЕТСКИЙ ЭТАП
РАЗВИТИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА**

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, Абовян № 104. 1946 г.

Ստորագրված է ապագրության 29 հունիսի 1946 թ. վ. 10866, պատվեր 531,
հրատ. 311, տիրաժ 4000, 2^{1/4} տպ. մամուլ, մեկ մամուլում 38000 տպ. նիւ

ՀԱՅՈՒ Գիտությունների Ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան 104.

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0012746

13524

ԳԻՏԱ. ՊՈՂՈԽԼՈՅԱՐ ՍԵՐԻԱՅԻՑ

ԼՈՒՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ

Ա. Համբարձումյան.—Տիեզերքի կառուցվածքը

Ե. Տեր-Մինասյան.—Ռոկհղարի հայ գրականությունը

Մ. Զալյախյան.—Կ. Ա. Տիմիրյաղեվը որովհա դարվինիզմի մարտիկ

Սալոմե Արհօյան.—Մուս գրողները հայաստանի մասին

Գուրզին Սելվակ.—Հայոց լեզվի դարչոցման սովորական փուլը